ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2012թ. **N --- - Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ կետի բ) ենթակետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28^2-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման կարգը հաստատելու մասին» N1098-Ն որոշմամբ սահմանված կարգը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համաձայնեցնելուց հետո առաջարկություն ներկայացնել Երևան քաղաքի բյուջեում համապատասխան միջոցներ նախատեսելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու
2012 թվականի ---------- ----ի
N ——Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

Երևան քաղաքում գտնվող պետական՝ սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված է Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների օգտագործման վերաբերյալ առաջարկությունները՝ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվում կապիտալ ծախսերի ծրագրերի տեսքով, որոնց իրականացումը ուղղված է բնակչության խմելու և ոռոգման ջրի, համայնքային նշանակության ճանապարհների, մանկապարտեզների, ինչպես նաև այլ ենթակառուցվածքների հիմնախնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի անմխիթար վիճակը, Երևանի քաղաքապետարանի կողմից պատվիրվել են փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, համաձայն որի նախահաշվային արժեքը կազմում է 363,319.7 հազար դրամ:

Երևանի քաղաքապետարանը նախատեսում է Այվազովսկու փողոցի վերանորոգման աշխատանքների, այդ թվում նաև տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների գնման գործընթացները կազմակերպել 272,174.0 հազար դրամի շրջանակներում, ինչի դիմաց ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացվող սպասվելիք մուտքերի հաշվին:

Այվազովսկու փողոցի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում նախատեսվում է երթևեկային մասում ամբողջ երկայնքով ասֆալտ-բետոնյա ծածկի 4-5սմ հաստությամբ իրականացում: Ամբողջովին փոխվելու է մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկը խճե հիմքով, ինչպես նաև բազալտե եզրաքարերը: Այվազովսկու փողոցի ճանապարհի երկարությունը կազմում է 2485 գծմ, իսկ լայնությունը 13-18 մ:

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28[2]-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից և օտարումից ստացված միջոցներն ուղղվում են Երևան քաղաքի համաքաղաքային կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորմանը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից ստացվող մուտքերի 30 տոկոսի չափով:

ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098–Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսվում է նշված միջոցների օգտագործման համար սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը՝ համաձայնություն ստանալու համար:

Երևանի քաղաքապետարանը նախատեսում է Այվազովսկու փողոցի վերանորոգման աշխատանքների, այդ թվում նաև տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների գնման գործընթացները կազմակերպել 272,174.0 հազար դրամի շրջանակներում, ինչի դիմաց ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից սպասվելիք մուտքերի հաշվին:

Ելնելով վերոգրյալից Երևանի քաղաքապետարանը մշակել է Այվազովսկու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, համաձայն որի աշխատանքների արժեքը կազմում է 363,319.7 հազար դրամ: Նշված աշխատանքների ձեռքբերումը նախատեսվում է իրականացնել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչի արդյունքում մրցակցության շնորհիվ հնարավոր կլինի աշխատանքների գնումը կազմակերպել առկա միջոցների հաշվին: ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1098–Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ կառավարությունից համաձայնությունն ստանալուց հետո նախատեսվում է համապատասխան միջոցներ նախատեսել Երևան քաղաքի բյուջեում:

Հաշվի առնելով վերոգրյալը Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեով նախատեսված միջոցներում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ